

նակներս որքան հեռացած, կտրուած ենք այդ երկրից: Որքան էլ թերութիւններ գտնենք այդ գրքի մէջ, բայց չենք կարող չը խօստովանել և այն, որ դա մի օգտակար աշխատութիւն է: Այստեղ տեսնում ենք թիւրքահայի իրական կեանքը, տեսնում ենք ամեն կողմով զարմանալի երևոյթ կազմող զէքսիմցիլ քըր-դին, որ հայի բարեկամն է, ապրում է նրա հետ հաշտ ու խաղաղ, պաշտում է նրա սրբերին, հասկանում է նրա լեզուն: Քրդական աշխարհը, մանաւանդ վերջին արիւնհանգ զէպքերից յետոյ, մեծ հեռաքրքրութիւն է զարթեցրել: Օտար ազգերը, որոնք քրդերի մասին միայն լսել են, գրում են քրդական ներկայի և անցեալի ուսումնասիրութիւնները: Բայց մենք ճանաչում ենք մեր այդ արնախում հարեաններին, մեր հոգեհանգիւններին:

«Դէքսիմը» յայտնի չափով կարող է լրացնել այդ պատկերները:

Լ.

30) ՄԵՍՐՈՎԲ ԲԱՅ. ՄԵԼԵՑՆ. «Քահանայական խնդրի» ռուսերէն թիւքիս, 1901 թ.

Մեր ժամանակի նշանաւոր եկեղեցական և բազմաշխատ գրող Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, ինչպէս յայտնի է, անցեալ տարի գրեց մի գիրք, որ ամբողջապէս նուիրուած է մեր ընթացիկ կեանքի հրատապ խնդիրներից մէկի անաչառ քննութեան. դա հեղինակի «Քահանայական խնդրին» է: Այն շերտ ընդունելութիւնը, որ գտաւ այդ աշխատութիւնը ժողովրդի և մամուլի ինտելիգէնտ, բարեւէր չըջաններում, ցոյց է տալիս, թէ նրան հասունացել է հեղինակի յարուցած խնդրի կարևորութիւնը և նրա կանոնաւոր և շուտափոյթ լուծումը. այդ խնդրի շուրջը ծագած վիճաբանութիւնների մէջ առանձնապէս չեչուում էր Արիստակէս եպիսկոպոսի անդուլ եռանդը և այն անչեղ, անվեհեր ոգին, որով նա շարունակ մաքառում է մեր ազգի և եկեղեցու պատուի յայտնի և աներևոյթ թշնամիների զէմ: Այդպէս չէ կարծում հ. Մելեանը, որ նորերս իր հրատարակած «Քահանայական խնդրի» շուրջը գրքով ճգնում է շուրջ Արիստակէս եպիսկոպոսի շօշափած խնդրի հիմնական կէտերը, սակայն ըստ էութեան, իսկապէս, ոչինչ չէ կարողանում ապացուցել և նրա խճբճական նկատողութիւնները ամբողջապէս պատում են սրբազանի անձնաւորութեան շուրջը: Մանրամասն կանգ առնել

այդ գրքի վրայ չենք ուզում, որովհետև դա ոչ լուրջ քննադատութիւն է և ոչ գրական տեսութեան մի փորձ, այլ իրան հեղինակի «թուղթիկ տպաւորութիւնները», որ նա ստացել է Արիստակէս սրբազանի քահանայական խնդրին նուիրած գրքի ընթերցումից: Բայց Մելեան քահանան այնպիսի հեղինակաւոր անձնաւորութիւն չէ, որ նրա «թուղթիկ դիտողութիւնները» առանձին արժէք ունենան: Ինչպէս ինքն իր յառաջարանի մէջ խոստովանում է, հեղինակ քահանան մտադիր է նոյն խնդրին նուիրում իր՝ արդէն ծրագրած աշխատութիւնը լոյս հանել, սակայն ինչն է ստիպել նրան հրատարակել իր «թուղթիկ դիտողութիւնները». դրա դադարէքը, ընթերցող, կ'իմանանք հեղինակի դիտողութիւնների հետ ծանօթանալոց յետոյ, երբ ձեզ համար պարզ կը լինի, որ հ. Մելեանին զբաղեցնող նիւթը, ինչպէս ասացինք, առաւելապէս Արիստակէս սրբազանի անձն է, քան նրա գրքի բովանդակութիւնը: Քննադատութեան այդ ձևը—ճիշտ ասիական է, որ և բնորոշում է հեղինակի ներքին աշխարհը և նրա յետին մտքերը. այդպիսի «քննական» դիտողութիւնների մէջ գաղափարի և իդէալի պաշտպանութիւնը քողարկում է տաղտկալի և ծանծրոյթ պատճառով սոփեստութիւններով, առողջ դատողութիւնը՝ անձի դէմ ուղղած չարամիտ յարձակումներով. իսկ անաչառութիւնը, որ քննադատողի սրտի և մտքի զարդը պիտի լինի, մաղձով թունաւորում զգացմունքին զոհ է գնում... Իզուր է հ. Մելեանը աշխատում համոզել իր լաւակամ տրամադրութեան մէջ դէպի սրբազան հեղինակը (20 էջ). դա սպարդիւն և աննպատակ փորձ է, այդ խօսքերի կշիռը որոշելու համար թող ընթերցողը նախ ծանօթանայ «լաւակամութեան» այն գոհարների հետ, որոնք առատօրէն ցրուած են հ. Մելեանի գրքի մէջ և յատկապէս ուղղում Արիստակէս սրբազանի դէմ: Գրքի գաղափարական մասը թողած, հ. Մելեանը ինկլիդիտօրին վայել հաւատաքննական եռանդով քրքրում է սրբազանի անցեալ կեանքը և գործունէութիւնը. մերթ ձգտում է թափանցել նրա սրտի խորքերը՝ նորանոր ամբաստութիւններ գտնելու համար, մերթ դիմում է երևակայութեան աշխարհին, յուսալով այնտեղից ևս ճարել մարդկային անուան և պատուի վրայ ստուեր զոյղ փաստեր—և այդպիսի ողորմելի փորձերով նսեմացնել յարգելի եկեղեցականի անունը և գործունէութիւնը. դա հին և ժանդոտած դէնք է, որի օգնութեան դիմում են որոշ ճգնաժամերին...

Հ. Մելեանի ասելով ինքը առաջ Արիստակէս սրբազանի ջերմ յարգողներից մէկն էր. հրասթափումը առաջ կ'կաւ միայն վերջին ժամանակ, երբ նա հեղինակի գրքի բովանդակութիւնից

նկատեց, որ նա իրաւամբ չէ վայելում ժողովրդի սէրը և յարգանքը: Անկեղծ է արդեօք հ. Մելեանի խոստովանութիւնը և ինչ նոր փաստեր սրբազանի դէմ նա կարող էր գտնել այդ գրքի մէջ: Այստեղ մենք չենք կարող չը նկատել, որ Արիստակէս եպիսկոպոսի գործունէութիւնը, մանաւանդ վերջին նշանաւոր 10—12 տարիները ընթացքում, անցաւ մեր աչքի առաջ և նրա մերձ անցեալում կատարած դերը անջնջելի և պատուաբեր հետքեր թողեց եկեղեցական տարեգրութեան մէջ. ահա այդ անցեալի մի բեկորն էր, որ սրբազան հեղինակը փաստորէն արձանագրեց իր «Քահանայական Խնդրի» մէջ և որ ամենքիս, բայց մանաւանդ հ. Մելեանին, արդէն անցած-գնացած անցքերից շատ լաւ յայտնի է. ուստի մենք երկմտում ենք, անկեղծ էր արդեօք երբեիցէ հ. Մելեանի յարգանքը դէպի սրբազանի գործունէութիւնը և երկդիմի չէր առհասարակ բարեկրօն քահանայի վերաբերմունքը վերջին ժամանակուայ հասարակական-կրօնական հոսանքների նկատմամբ...

Որչափ մեծ օգուտ և բարոյական մխիթարութիւն տուած կը լինէր հ. Մելեանը, եթէ իր արդար ցասումը ուղղէր այն կողմը, ուր այնչափ նիւթ կայ խօսելու և բորբոքուելու...

N.

## Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Материалы по вопросу о фальсификации пищевых продуктовъ съ приложениемъ законопроекта. Издание редакціи журнала «Вѣстникъ Винодѣлія». Одесса, 1901. Цѣна 2 р.
- 2) Критическая замѣтка по поводу статей А. П. Артемьева. «Тифлисъ—какъ климатическая станція». А. Н. Бабаева. (Оттискъ изъ прод. Им. Кав. Мед. Общ. № 19, 1901 г. стр. 590).
- 3) Պ. Մոճոռեանց. Սրտի վէրքերը. արտատպ. «Տարազից»: Ալէքսանդրօպօլ, 1901 թ. գինն է 10 կ.:
- 4) Տմբալչի Խաչան. Տեղբարդ, II հատոր. արտատպուած «Նոր-Դարից». Բագու, 1900 թ. գինն է 40 կ.:
- 5) Տմբալչի Խաչան. Զուռնա-Տմբա, հատոր III. արտատպ. «Նոր-Դարից». Բագու, 1900 թ. գինն է 40 կոպ.:
- 6) Տ. ք. Մարաղեան. Կանանց ինդրի առթիւ. արտատպ. «Նոր-Դարից», Թիֆլիս, 1901. գինն է 40 կոպ.:

- 7) Ի. Պօտապենկօ. Փարաջաւոր ուսանողը. թարգմ. Դ. Աղաջանեանց: Թիֆլիս, 1900 թ. գինն է 15 կոպ.:
  - 8) Ֆարրարի քարոզներ. թարգմ. ռուսերէնից Ս. Մ. Վաղարշապատ, 1901 թ. գինն է 1 ռ.:
  - 9) Շիլլէր. Օրլէանի կոյսը, բնագրից ամփոփեց Ս. Թառայեանց. Թիֆլիս. 1901 թ. գինն է 20 կոպ.:
  - 10) Բժպ. Վ. Արծրունի. Ամուսնութիւն. առողջապահական էտիւդ. արտատպուած «Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, 1901 թ. գինն է 75 կոպ.:
  - 11) Տ. Վարդանեանց. Ժողովրդական անգիր բանաստեղծութիւններ. Թիֆլիս, 1901 թ. գինն է 30 կ.:
  - 12) Վ. Ռոտինեանց. Գործնական խոհարարական դասագիրք. Թիֆլիս, 1901 թ. գինն է 1 ռ.:
  - 13) K. J. Basmadjian, La Stèle de Zouarthnotz. Paris, 1901:
  - 14) Լ. Շելլգունովա. Արջի պատմութիւնը: Չասօգիմսկի. Գալլը. Նուէր մանուկներին. Թիֆլիս, 1901 թ. գինն է 15 կոպ.:
-